Ը. ՏԱՐԻ | ՇԱԲԱԹ 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1905 | ԹԻՒ 755

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 «
Արտասահմանի
համար տարեկան 15 ֆր.
վեցամսեայ 8 «
Ամերիկայի համար
տարեկան 3 տ.
վեցամսեայ 1.50 «

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ:

—o—

Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ է

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯЪ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ
"Шаржумъ"
Варна

Redaction du journal
„Charjoum"
Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռքէ
15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռքէ
20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ԿՈՎԿԱՍԱՀԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—)o(—

Կովկասահայը այսօր մի արտակարգ կացութեան մէջ է գտնըւում. հազիւ զւարթացած հայ դպրոցների և կալւածների վերադարձի և դպրոցները բացվելու աւետումով, որի տպաւորութեան տակ նա նոր եռանդ ստացած պատրաստութիւններ էր տեսնում ազգային դաստիարակութիւնը որչափ կարելի է շուտ վերակենդանացնելու և տասնեակ տարիների կորուստի թողած վատ ու վնասակար հետեւանքները ոչնչացնելու կամ չեզոքացնելու, վրա հասան Թաթար-հայ ընդհարումները, աւերակների վերածեցին գիւղեր ու քաղաքներ խլեցին բազմաթիւ կեանքեր, ոչնչացրին ահագին հարստութիւններ եւ ամենասարսափելին Կովկասահայի մէջ կորցնելու աստիճանի հասցրին այն հաւատքը և յոյսը թէ՝ ինքը հընարաւորութիւն պիտի ունենայ խաղաղ կերպով շարունակել իր կուլտուրական գործը. Շուշի, Բագու, Նախիջեւան և Երեւան իրենց գիւղերով միասին այս րոպէիս ժամանակ չունեն դըպրոցների մասին մտածելու, այդ տեղերում բնակիչների մեծ մասը միայն իր գոյութիւնը պահպանելու ծանր խնդրով է զբաղված. դաստիարակութեան, նոր սերնդի մտաւորապէս և բարոյապէս պատրաստման գործը առայժմ երկրորդական տեղ է բըռնում նրանց համար, ու այդ շատ բնական է. երբ գոյութիւնդ վըտանգուած է, երբ կեանքդ և ունեցածդ մազից է կախված, այդպիսի վայրկեաններում անկարող ես մտածել կրթութեան և դպրոցների մասին.

Կրթութիւն, դպրոց և կուլտուրական ուրիշ հաստատութիւններ ու գործեր ծնունդ են առնում և առաջադիմում են այն պարագայում, երբ մարդի գոյութիւնը, տարրական իրաւունքները և գոյքը ապահովված են...

Սակայն, բարեբախտաբար, Կովկասահայ մամուլից երեւում է որ այս արհաւիրքի օրերում իսկ կովկասեան հայութեան մեծամասնութիւնը չէ ընկճված ծանր պատուհասային հարուածների տակ և բաւական եռանդով միջոցներ է ձեռք առնում օգտվել Ցարի ուկազի դէպի հայերը արտայայտված բարի տրամադրութիւնից և օր առաջ բանալ իր կրթական հաստատութիւնները հայ մանուկներին, հայ նոր սերնդին փողոցներից ազատելու համար.

Կովկասահայ թերթերի էջերի կէսը այսօր նւիրված են սպանութիւնների, թալանների, աւերումների, ընդհարումների նըկարագրութեան, միւս կէսը դպրոցների բացման, հոգաբարձութիւններ ընտրելու, մանկավարժական կարեւոր խնդիրների ու հարցերի. Մի էջում կարդում ես մահաչունչ, յուսահատեցնող լուրերը, միւսումը՝ նոր թափով վերածնելու կենդանարար շունչն է բուրում.

Կարճը այսօր կովկասահայ մամուլը պարզօրէն պատկերացնում է հայի հոգեկան վիճակը. մի կողմից սարսափահար, միւս կողմից բոլորովին չընկճուած սարսափներից այլ հաստատ որոշումով չընկճվել արհաւիրքներից, և շարունակել ձեռք բերելու իր տեղում հաստատ և կայուն մնալու միջոցները ապագայ պատահելիք արհաւիրքներին աւելի պատրաստված դիմագրաւելու համար.

Այն ժողովուրդները, որոնք կենսունակ են, վտանգների դիմագրաւելու միջոցներ ստեղծելու ընդունակ, պատահական, նոյն իսկ շարունակական մեծ պատուհասներից չեն ոչնչանում. ընդհակառակը դառն փորձից օգտված, յարմարվելով ստեղծված պայմաններին, զինվելով այդ նոր պայմաններին յարմար միջոցներով շարունակում են իրենց կեանքի ընթացքը աւելի ապահով ապագայ ըստեղծելու համար.

Այս ճշմարտութիւնը շատ յըստակօրէն ըմբռնում է ներկայումս կովկասեան մամուլը. Նըրանցից մէկը «Արշալոյս» իր մի խմբագրականով պահանջում է Կովկասահայից չը հաւատալ միայն հաշտ միջոցներին. զինվել ամէն միջոցով ինչ պէտք է ինքնապաշտպանութեան համար վայրենի և տգէտ դրացիների դէմ, միեւնոյն ժամանակ աշխատել համերաշխութեան ոգին զարգացնել. Եւ իրօք առանձ ուժի, որից միայն կարող են ակնածել տգէտ, շատ անգամ գազանութեան հասնող ցեղերը, անկարելի է միայն խաղաղ միջոցներով վերջնականօրէն հաշտութիւն ստեղծել Կովկասի թաթար և հայ տարրի մէջ. Կովկասի Թուրքը պէտք է այսուհետեւ համոզված լինի որ նա այլեւս առանց մեծ վնասների, նոյնիսկ կառավարութեան թոյլութեան կամ կողմնակիօրէն աջակցութեան պարագային չը պէտք է կարողանայ խլել հայ կեանքը, ստացվածքը և պատիւը. Այդ համոզումը կովկասեան մահմետական տարրի մէջ ստեղծվելուց յետոյ է որ նա իսկապէս կարող է հայ տարրի հետ հաշտ, եղբայրաբար ապրել.

Գեներալ Թաքաշվիլին Շուշիի Թուրքերին յայտարարել է.— Ես հայերին ճանաչում եմ. Նըրանք միայն ստիպված ինքնապաշտպանութեան համար զէնքի կը դիմեն. Դուք հիմա լաւ դաս առաք որ նրանք իրենց կեանքը աժան չեն ծախում.

Կառավարութեան ներկայացուցչի բերնից դուրս եկած այս խօսքը ոչ միայն մեծ նշանակութիւն ունի հայերիս համար, այլ և նրա տակը կայ թագնված այն համոզումը թէ—եթէ այսպէս շարունակվի, Կովկասը պէտք է մատնվի բացարձակ անիշխանութեան—հայերը չը պէտք է կոտորվեն փայփայված տարրի ձեռքով, ռուս ու փուս, այլ վերածվելով հակառակ բանակի Կովկասը վերածեն պատերազմի դաշտի, որը խաղաղացնելու համար ռուս կառավարութիւնը ինքը մեծ զոհողութիւնների պէտք է դիմէ որպէսզի իր ընկած պրեստիժը բարձրացնէ թէ հպատակ ցեղերի և թէ աշխարհի առջեւ....

Այո՛, Կովկասցի հայը նախ պէտք է դիմէ ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու միջոցներին, հապա համերաշխութեան ոգի տարածելուն. Մի քանի անգամ կրկնել ենք այս էջերում, որ հայը Կովկասում երբեք չպէտք է նախայարձակ լինի. բայց նա միշտ աչքի առաջ պէտք է ունենայ որ վաղը, միւս օրը Թաթարը կարո՞ղ է կրկին գրոհ տալ իր վրա. ուստի նա պէտք է միշտ ամեն օրն ամեն ժամ պատրաստ լինի դիմագրաւելու այդ գրոհին. Ինչպէս գազաններով լի անտառում զէնքով են պտտում, այնպէս էլ գազանային բնազդ ունեցող ցեղերի հետ զէնքը գրպանում պէտք է ապրել....

Ցաւով ենք որ Բագուի առաջին դէպքի վախկոտութեան զըզւելի և ամօթալի նմուշները տեղի չեն ունենալ Կովկասահայ շըրջանակներում, ու Թաթար տարրը պէտք է համոզվի որ հայի գլուխը կտրելու համար պէտք է նրա տեղը թաթար գլուխ տալ.

ՎԱՐԴՕ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱՅՈՒԹԻՒՆԸ

—()o()—

Քաղաքականապէս ինչորկէ ամենէն շատ մեզի կը հետաքրքրէ Հայկական խնդիրը. սակայն այդ խնդիրը, Ծայրագոյն Արեւելքի պատերազմը վերջանալէն յետոյ իսկ, այսօր պետութիւններէն և պետական մարդոցմէ ո՛չ մէկը կը հետաքրքրէ, հակառակ Սասունի, Իզմիրի և Պոլսոյ դէպքերուն, թէպէտև թրքական բանտերը այսօր ամեն ատենէ աւելի լեցուն են հայերով ու հայուն վիճակը աւելի ծանր է Համիտին կայսրութեանը մէջ, քան երբ և

իցէ ։ Մեզ վերջերս քիչ թէ շատ պաշտպան հանդիսացող Ֆրանսան, հազիւ ազատած Գերմանիոյ հետ պատերազմելու վախի մղձաւանջէն, այսօր զբաղած է Դէլկասէին չօվէնութեան հետքերը մաքրելով։

Անգլիա մեր երբեմնի ջերմ պաշտպանը իր պաշտօնական մարդոց բերանով մեզի խորհուրդ կուտայ համբերել և համբերել, մինչեւ որ Թուրքիա յեղաշրջուի, ու կարծես թէ զբաղած է միայն Ռուսիոյ հետ համաձայնութեան մը յանգիլ իր ասիական շահերը վերջնապէս ապահովցնելու դիտաւորութեամբ. և ո՞վ գիտէ թէ այդ շահերուն չը պիտի զոհուի և մինչեւ օրս մեզի ցոյց տուած պաշտօնական պաշտպանութիւնը։

Անգլիա Այտին—Իզմիրի երկաթուղիին համար այս օրեր Թուրքիոյ հետ լարուած վիճակի մը մէջ կը գտնուի. ու եւրոպական թերթերը կը հաղորդեն որ դեսպանը Թուրք կառավարութեան սպառնացած է որ եթէ շուտով այդ խնդիրը չը լուծուի ի նպաստ Անգլիոյ, Անգլիական նաւատորմիղը Իզմիր պիտի գայ։ Անգլիա Հայկական հարցի միջոցին Գլատսթոնի խօսքով յայտարարեց թէ իրենց զրահաւորները Արարատ լեռը չեն կրնար բարձրանալ, կարծես թէ այն ատեն Իզմիրը Թուրքիոյ չէր պատկաներ . . . .

***

Մակեդոնական խնդիրն ալ նախանձելի վիճակի մը մէջ չի գտնուիր, թէև Անգլիա այս անգամ այդ խնդիրը լուծելու համար աւելի մեծ եռանդով կը միջամտի։ Եւրոպական քոնթրոլին (ելեմտից վրայ) ջերմ պաշտպանը Անգլիան է ։ Քոնթրոլէօրները արդէն ուրոշուած են և Մէլանիք անգամ հասած, բայց Սուլթանը կը յամառի, միշտ յուսալով որ պետութիւնները չը պիտի համաձայնին բռնութեամբ զինքը ստիպել այդ իրօք արժէքաւոր բարենորոգումը մտցնելու համար։

Եւրոպական թերթ մը կը յայտնէ որ շատ հաւանական է թէ Անգլիա իր նաւային ցոյցով թէ Այտինի երկաթուղիին և թէ Մակեդոնիոյ քոնթրոլին խնդիրը լմցնէ . . . . .

***

Լահէի մէջ խաղաղութեան երկրորդ ժողով կայացնելու համար գրեթէ ամեն պետութիւններն ալ համաձայնած են. թէ ինչ խնդիրներ պիտի ծեծուին այս երկրորդ ժողովին մէջ յայտնի չէ ։ Առաջին ժողովին հետեւեցաւ Թրանսվալի և Մայրագոյն Արեւելքին պատերազմները, արդեօք նորէն ուրիշ աւելի մեծ պատերազմ մը չը՞ պիտի հետեւի։ Մարօքի խնդրին պատճառով ծագելիք Ֆրանսա-Գերմանական պատերազմը բարեբախտաբար վրիպեցաւ, բայց Գերմանիա անպատճառ կուզէ որ Ֆրանսա կամ իրեն հետ ըլլայ և կամ թէ հակառակորդ։ Վիլհելմին բռնած այս գրգռիչ դիրքը արդեօք չը՞ պիտի պայթեցնէ այն ահեղ պատերազմը որը կրնայ ընդհանուրի վերածուիլ, որմէ իրաւացիօրէն ամբողջ մարդկութիւնը կը սոսկայ։

Վիլհելմ անհանգիստ, փառասէր աշխարհը տակնուվրայ ընելու տրամադիր Գերմանիոյ ուժէն սարսեցնելու կայսր մըն է, արդեօք Եւրոպայի գլխուն փորձանք մը չը՞ պիտի հանէ։

Միթէ ուրիշ Դէլկասէ մը չի կրնայ երեւան գալ Ֆրանսայի մէջ կամ այլուր...., ամեն ճիգ կը թափէ Ռուսիոյ հետ մտերկնալ, Ռուսիոյ բրէզգիժը ինկաւ. արդեօք Վիլհելմ չը՞ պիտի աշխատի ինկած բրէստիժը բարձրացնելու պատրուակով Ռուսիան խոթել նոր փորձանքի մէջ ինքն ալ Եւրոպայի մէջ մեծ իրարանցում մը ձգելու համար։

***

Պալքանեան պետութիւնները կը շարունակեն իրար միս կրծել։ Յունաստանի և Ռումանիոյ յարաբերութիւնները խիստ ձգտուած են. ինչպէս նաև Պուլկարիոյ և Սերպիոյ բարեկամութիւնը ոչնչացաւ։ Սերպերը կուզեն Մակեդոնիան բաժնել Պուլկարիոյ հետ, իսկ պուլկարները ինքնավարութիւն կուզեն Մակեդոնիոյ համար։ Հետզհետէ աւելի իրարու կը մօտենան Ռումանիա և Պուլկարիա, որովհետեւ երկուքն ալ հակառակ են Յունաստանի ոտնձգութիւններուն Մակեդոնիոյ մէջ։ Լուր կայ որ այս ամառ Ֆերտինանտ Իշխանը Ռումանիոյ թագաւորին այցելութիւն պիտի տայ, և այդ այցելութեան միջոցին երկու պետութեանց միջեւ գոյութիւն ունեցող բարեկամական կապերը աւելի պիտի ամրապնդուին։

Թուրքիա օգտուելով Պալքանեան պետութիւններու այս անհամերաշխութենէն, ամեն ճիգ կը թափէ Մակեդոնիոյ մէջ իրարու դէմ գրգռել այդ պետութեանց ցեղակիցներուն և յաջողած ալ է.... Թուրքիան կը շարունակէ իր աւերումի գործը Մակեդոնիոյ մէջ շնորհիւ Պալքանեան պետութեանց, մեծ պետութեանց և Մակեդոնական ցեղերու անհամաձայնութեանց վարպետօրէն օգտուելով այդ պայմաններէն։

ԿէՏ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՅՔԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Սեպտ. 27-ին առաւօտեան Նախապետ եպիսկոպոս Նահապետեանը, որ Վեհափառ Կաթողիկոսի կողմից լիազօր է նշանակուած. դպրոցական գոյքերը Կովկասի ուսումնարանական վարչութիւնից յետ ստանալու համար, ներկայացաւ Կովկասի Փոխարքայի օգնական Սուլթան Կրիմ Գիրէյին։ Սրբազանը խնդրից չուտացնել դպրոցական գոյքերի յանձնումը, քանի որ նա յատուկ այս նպատակով Վեհափառի հրամանով Թիֆլիզ է եկած.

ՍԷՄՈՒԷԼ Ս. ՊԼԷՅՔ

18

ԴԷՖԻ

Հայկական Ռոման մը

(Թարգմանութիւն Անգլիերէնէ)

ԳԼ. Թ.

ՍՒՒԼԷՅՄԱՆ ԻՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ

— Ճշմարիտ է, իմաստուն Արամազան, որ երիտասարդ մըն եմ, սակայն, շատ ապրած եմ ամեն դասակարգի և պաշտօնի տէր մարդկանց հետ—բռնապետներ, դաւաճաններ, հայրենամերժներ տեսողութենէս շատ անցած են. ու զանոնք զանազանելու անսխալ բնազդ մը ունիմ։ Պատժելու համար չէ որ կըսեմ, Արամազան, բայց, երբ մէկու մը դէմքը տեսնեմ, անոր նկարագիրը մտաւոր տեսողութենս առջեւ կը պարզուի։ Այս նախազգուշական հարիւրաւոր անգամներ վստահած եմ և երբե՛ք չեմ յուսախաբուած, կը ցաւիմ մեր բոլորիս,—և մասնաւորապէս Դէֆիիդ սիրոյն համար, որ վշտացուցի քեզ։ Բայց պէտք ներե՞ս ինծ։— Սիւլէյման յորդանքով ու պաղատագին կը խօսէր, ուստի, հայրս ալ բնականաբար զգածուեցաւ ;

— Այո. բայց, Սիւլէյման, դուն չես հասկցած թէ Գրօզօն ինծ մօտ երբեւ զաւակ մեծցած ըլլալով՝ բոլորովին վստահելի է։ Ինչ բարիք որ մեր հայրերուն Աստուածը զրկէ մեզի ան ալ կը մասնակցի. ա՛ն ալ մեր բազմապատկող տանջանքներով կը տառապի ։ Երէկ, երբ Դէֆիս կորսնցուցի, իր կսկիծը նոյն իսկ իմինէս ալ աւելի էր։ Ո՛չ, ո՛չ. չեմ խորհիր թէ Գրօզօն դաւաճան մ՚է։

— Այդպէս թո՛ղ ըլլայ. Արամազան, բարկացած չը բաժնուինք։ Տե՛ս արշալոյսը. պէտք է հեռանամ ։ Հարկ եղած տեղեկութիւնները պահէ, մինչեւ որ ես անձամբ գամ։ Կրնայ ըլլալ որ յուսածէս աւելի շուտ ըլլայ։

— Աստուած հետդ ըլլայ, Սիւլէյման։

Սիրեցեալս իր Դէֆին չը փնտռեց երբե՛ք ։ Անճապարանքով դէպի դուռը կը դիմէր ան ։ Հօրս երեսը նայելով՝ ետեւէն վազեցի ու «սիրելիս . . . սիրելի՛ս...» գոչեցի ։ Արցունքները այտերէս վար կը հոսէին. Դուռը հասած էր հիմա. Ցանկարծ կանգ առաւ, թեւերուն մէջ սեղմեց զիս ու արտասուաթոր երեսս համբուրեց։ «Աստուած պահէ Դէֆիս» եղաւ միակ խօսքը և ոլորուն սանդուխներուն վրայէն շուտով անյայտացաւ ։ Մէկերկու վայրկեան կանգնեցայ հոն ու իր ոտքին ձայնին մտիկ կընէի։ Լսեցի որ Հուրին կանչեց իր անունով։ Ապա, վշտահար երեխայի մը նման ինկայ գետին և սկսայ լալ ու հեծկլտալ, մինչեւ որ Միքէն գալով հեռացուց զիս ։

ԳԼ. Ժ.

ՇՐՋԻԿ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

Ցաւօրդական օրերը ունայնութիւն մը կազմեցին։ Անդրադառնալով հիմատոնց վրայ, չեմ յիշեր դէպք մը՝ որ ամպոտած ուղեղիս մթութեան մէջ թափանցէր։ Այս օրերը փոխանցուեցան շաբաթներու, ամիսներու. Կարճատեւ ամառը անցաւ ու յաջորդեց երկար ձմեռը ։ Կեանքս ալ՝ սիրոյս հետ սլացած էր։ Այսուհետեւ ի՞նչ նշանակութիւն ունէին ամառուան արեւը, կամ չրթակապոյտ երկինքը, կամ Արարատայ վիթխարի կատարները և կամ ձմեռնային ձիւնը՝ խե՛ղճ, սրտաբեկ դէմքին համար ։ Սակայն և այնպէս, մտային այս արտակարգ փոփոխութիւնս շատ քիչ ազդեցութիւն գործեց արտաքին երեւոյթիս վրայ։ Թէպէտեւ, ճիշդ է որ քայլերս կորսնցուցած էին իրենց առաձգութիւնը, ձայնս իր ներդաշնակութիւնը, աչքերս իրենց պայծառութիւնը, որոնց մթութիւնով վարագուրուած կափարիչները թուլօրէն ծանրացած էին անոնց վրայ.—կրկին մեր հսկայ աւերակներուն մէջ կը շրջէի, երբեմ անցեալի արձագանգ մը, կը ծնրադրէի, ինչպէս առաջները, հօրս օրհնութիւնը ընդունելու համար. նոյն իսկ ժառելային ժըպիտով մը, ներողամիտ կը գտնուէի Գրօզօյի կրքոտ, գազանային ու այլանդակ սիրաբանական փորձերուն ։ Բայց անգամ մը սիրա՛ծ էր արեւելցի յատուկ խանդավառութեամբ մը ։ Այդ բաւական էր. սիրտս մեռած էր... Միքէն ցաւով կը դիտէր իր Դէֆիին վիճակը, ինչպէս յայտնեց ինծ յետոյ, սակայն և այնպէս, բացարձակապէս կը զգուշէր ինքզինքը այդ մասին խօսելէ, որոնք կրնային վշտիս սահանքները բանալ ։ Ընդհակառակը, իր սխալած ազնուութեամբ բացի այն երջանիկ օրերէն —Սիւլէյմանէս—ամեն բանի մասին կը խօսէր ան. պէտք էր Դէֆիին մոռնալ սովրեցնել։ Մոռնա՛լ... Հրամայէ՛ գետերուն ետ դէպի իրենց լեռնային ակը վերադառնալ ։ Մոռնա՛լ . . . Հրամայէ ովկիանի ալիքներուն դադրիլ լուսինին գրաւիչ զօրութեան ներքեւ բարձրանալէ ու փրփրալէ։ Ջո՛ւր ջանք։

Ու կրկին թօշնոց երգեցողութիւնը լսելի եղաւ երկրին մէջ ։ Այս երգեցողութեան հետ վերադարձան նա՛եւ անցեալի յիշատակները ։ Սիրո՛յ շրջանն էր։ Նոյն իսկ յանդգնեցայ մեծ, կղպուած մուտքէն ներս մտնել. և օրէ օր գաղտնապէս դուռը կերթայի, որուն բանալին գտած ըլլալով՝ որոշած էի քովս պահել ։ Օր մըն ալ դուրս ելայ և Հուրին կապուած ծառը տեսնելով գացի ու համբուրեցի զայն։ Ցիմարութի՞ւն... Այո՛։ Աշխարհ յիմարութիւնով լեցուն է։

Նաև, որ ամենուրեք այդ կարգադրութեանն են սպասում՝ դպրոցներ բանալու համար; Սուլթան Կրիմ Գիրեյ յայտնեց սրբազանին, որ այս շաբաթ իսկ գոհացում կը տրուի Վեհ. Կաթողիկոսի կամքին։

—○○—

«Բագվի»-ում լոյս է տեսել մի նամակ, որի մէջ Շուշուայ հայերը մամուլի միջոցով իրանց շնորհակալութիւն են յայտնում գեներալ-նահանգապետ Տակայշվիլուն, որը կոտորածների վերջ գրեց աւելի իր ազդու և համարձակ խօսքերով, քան թէ զինուորական միջոցներով։

«Թուրք և հայ հասարակութիւնների ներկայացուցիչներին զգալ տալով իր իշխանութեան ոյժը, գեներալը սակայն խօսում էր այնքան անկողմնապահ, անկեղծ ու բարեացակամ, որ երկու կողմն էլ նայում էր նրա վրայ ոչ թէ մի ահարկու, խստասիրտ մեծաւորի, այլ ազգաբնակութեան ընկերոջ և արդարասէր դատաւորի վրայ: Ինչպէս վրացի, քաջ ծանօթ լինելով թուրքերի և հայերի բնաւորութեան հետ, գեներալն այնպիսի կտրուկ և շիտակ նկատողութիւններ էր անում առաջացած ընդհարումների պատճառների վերաբերմամբ, որ թշնամացած կողմերը, ոչ մի պաշտպանութեան խօսք չգտնելով, համաձայնւում էին նրա հետ։ Երբ թուրքերը գանգատւում էին գեներալին, մեղադրելով հայերին իբրեւ կոտորածների հեղինակներին, գեներալը ասաց. «Ես մանկութիւնից իվեր ճանաչում եմ հայերին և թուրքերին, բայց առաջին անգամ եմ լսում, որ հայն առանց ծայրայեղ կարիքի ցանկութիւն ունենար վերցնել դաշոյնը նախայարձակ լինելու դիտաւորութեամբ և ոչ թէ ինքնապաշտպանութեան։ Գուցէ ես սխալւում եմ. Պատասխանեցէ՛ք ինձ խղճով, ճանաչո՞ւմ էիք հայերին այլ կերպով։ Ասացէք խնդրեմ, մի՛ քաշուէք»։ Բոլորը համաձայնուեցին գեներալի կարծիքի հետ և պարզասիրտ խոստովանուեցին իրանց բէկերի բերանով, որ այս եղբայրասպան պատերազմի մէջ մեղաւոր է նախ և առաջ իշխան Գոլիցինի քաղաքականութիւնը։ Այնուհետեւ մտատանջութեան մէջ ընկնելով և տխուր դէմքով Տակայշվիլին նկատեց. «այդ քաղաքականութիւնն արդէն յաւիտենականութեան է յանձնուած։ Դուք դառն փորձով համոզուեցիք, որ հայերն այնքան էլ աժան գնով չեն ծախում իրանց կեանքը։ Սա թո՛ղ ձեզ լաւ դաս լինի՛»։

Այս կարծիքները կարելի էր աւելի լաւ պարզաբանել....

«ԱՐՇԱԼՈՅՍ»

ԿՈՎԿԱՍ

ԱՐԻՒՆՈՏ ԷՋԵՐԻՑ

Պետերբուրգի հեռագրական գործակալութիւնը հաղորդում է Բագուից սեպտ. 25ին.

Ա.—Նաւթահանքերում աշխատանքները կըսկսուեն մօտիկ ապագայում առանձին զինուորական հսկողութեան տակ։ Դրութիւնը քաղաքում սպառնալական է. տենդային անհամբերութեամբ սպասում են նաւթարդիւնաբերողների ժողովի արդիւնքներին։

Բ.—Պետերբուրգ, 24 սեպտ. Նաւթային խորհրդակցութիւնը ելեւմտից նախարարի նախագահութեամբ, քննեց հարցերի ծրագրի առաջին բաժանմունքը։ Վիճաբանութիւնից երեւած, որ նաւթարդիւնաբերողները կարող են հանքերը վերականգնելով աշխատութեան ձեռնարկել հետեւեալ պայմաններով. 1. եթէ հանքերը կը պահպանուեն բաւականաչափ զինուորական ուժով, 2. եթէ ոստիկանութիւնը արագ վերակազմութեան կենթարկուի եւ նրա միջից հեռացուած կը լինի տեղական տարրը եւ 3. իբրեւ ժամանակաւոր միջոց՝ նաւթարդիւնաբերողների հաշուով՝ 70 որոշեալ դիրքեր պահող ոստիկաններ կը նշանակուեն, որոնց մէջ տեղացի եւ կօզակներ չպէտք է գտնուեն,

Գ. Ասխաբաթ, 24 սեպտ. Պարսկաստանի Ռուսաց դեսպանը հեռագրում է, որ թուրքերի եւ հայոց մէջ թշնամական ցոյցերը վերջացան եւ կարելի է յուսալ, որ կովկասեան դէպքերն անցնեն առանց հետեւանքի։

—)o(—

Յայտնի է բոլորին, թէ ինչպէս Բագուի վերջին դէպքերի ժամանակ պահակ զինուորները սկսեցին ռմբակոծել Բալախանիում նաւթագործների հիւանդանոցը, ուր լցուել էին փախչող անօգնական հայերը եւ որտեղից, ըստ ցուցմունքի Օղիշէլիձէ եւ Սմէտլով սպաների, իբր թէ հայերը գնդակ էին արձակում զօրքի վրայ։

Այժմ Կովկասի փոխարքայի հրամանով եւ վերոյիշեալ երկու սպաների խնդրանօք՝ դատական քննութիւն է նշանակւում ստուգելու համար եղածը։

Այդ իսկ դէպքի մասին, հիւանդանոցում ականատես եղած բժիշկ Մինասեանը մայրաքաղաքի թերթերին հեռագրում է հետեւեալը.

«Ռուս. հեռագրական գործակալութիւնը Բագւում, ուր գործակալութեան ագենտը թուրք Թօփչիբաշեւն է, հաղորդեց որ իբր թէ հաստատուած է, որ Սաբունճիի հիւանդանոցից հայերը գնդակ են տեղացել զօրքի վրայ։ Դա բոլորովին սուտ է։ Որպէս փոխանորդ աւագ բժշկի եւ որպէս ներկայ դէպքին, հաստատում եմ, որ հայերը ոչ մի գնդակ չեն արձակել զօրքի վրայ. Հայերը գնդակ արձակեցին ամսի 23ին միայն այն թուրքերի վրայ, որոնք երկու տակառ մազութ էին գլորում դէպի հիւանդանոց եւ ուզում էին հրդեհել շէնքը։ Շնորհիւ հայերի կողմից այդ թուրքերի վրայ արձակած գնդակների, հիւանդանոցն ու հիւանդները ազատուեցին. սակայն զօրքերի սպան, սաբունչեցի Շաբան Ռուստամովին հաւատալով, Շաբանը, որ թուրք թալանողների եւ սպանողների գլխաւորն էր, սկսեց ցերեկով գնդակահարել հիւանդանոցը, իսկ գիշերով ռմբակոծել թնդանօթով, չնայելով որ բժիշկներն ու հիւանդանոցի ծառայողները պնդեցին, յայտնեցին սպային թէ հայերը զօրքերի վրայ զէնք չեն արձակել, չնայելով որ նրանք աղաչեցին եւ խնդրեցին սպային, որ պահակներով հայերին քաղաք տանեն, որպէս զի ազատեն թուրքերի կողմից սպանուելու վտանգից»։

Նոյն ձեւով է պատմում հիւանդանոցի դէպքը սկզբից մինչեւ այժմ. Նոյնը փոխարքային վկայել է հիւանդանոցի ռուս բժիշկը եւ անշուշտ արդարադատութիւնը կը յայտնագործի նոյնը։

——

Բագուի ընդհանուր նահանգապետը

Յաջորդ օրը, կոտրած զանգակի մը ձայնէն փարձուելով՝ պարտէզի պատերուն ետեւը գացի ու տեսայ—լաւ, չը պիտի վարանիմ պատմել։ Օձապտոյտ ճամբուն վրայէն տուն վազեցի և բռնելով Միքէի թեւէն, գոչեցի՝ գրեթէ շնչասպառ.

—Եկո՛ւր, Միքէ, չե՞ս յիշեր, որ երբ... Սիւլէյմանս—հազիւ թէ կրնայի արտաբերել այդ սիրելի անունը—հեռացաւ, ըսաւ թէ մէկը պիտի գրկէր ցնցոտիներ հագած, սոված էշով մը...

—Օ՛, այո՛, Դէֆիս. Արամաքանի նամակը ստացած չեմ տակաւին։ Տէրոջը պիտի երթամ.

Ամուր մը բռնեցի զինքը։ "Ո՛չ, ոչ, Միքէս, հայրս ու Գրօգօն բան մը պէտք չէ գիտնան այս մասին։ Կը խոստանա՞ս ինձ, Միքէս.

—Միքէն մինչեւ մահ հաւատարիմ է. ըսաւ էն։

—Ուրեմն գնա՛. ես հոս քեզի պիտի սպասեմ, ըսի։ Աճապարէ՛... կը յուսամ թէ հեռացած չէ։

Դուռը գոցելով՝ քիչ մը ատեն՝ սկսայ դէզ խոտեր հաւաքել, իբրեւ պատրուակ. եթէ հակառակ պարագային հայրս կամ Գրօգօն գար՝ առաջին անգամ, երբ որահէն անցայ, երկուքն ալ գրելով զբաղուած էին, Երկրորդ անգամ, Միքէն բերած պահուս, սովորական պարտէզի դռնէն գացինք։ Սրտաբաբախ՝ որումն չեղչերը կը քաշկռտէր ուժգնութեամբ։ Ահ. այդ սիրտը կարծածիս նման մեռած չէր, այլ անհաւանական յոյսերով եւ վախերով կը բաբախէր։

Միքէի մեկնումը քանի մը րոպէ չէր տեւած—թէպէտեւ անոնք ինձ ժամեր թուած էին—երբ կրկին վերադարձաւ, ձեռքը ձմերուկով եւ խաղողի ողկոյզով մը. երկուքն ալ թարմ ու հրապուրիչ կը թուէին։

—Ա՞յդ է բոլորը, Միքէս, հարցուցի։

—Այո, Դէֆիս, պատասխանեց. կառքին մէջ եղածները բոլորն ալ անպիտան էին ու մարդը, չափազանց խեղճ էր, թախանձեց որ անոնք գնեմ. «Եթէ գնես, պիտի կրնամ քիչ մը ուտելիք ճարել» ըսաւ։

—Ո՛հ, Միքէ, երթամ գաթայ մը եւ քիչ մըն ալ ձաւար բերեմ։ Հիմա բոլորն ալ այսպէս, թշուառ են Հայաստանի մէջ։

Բայց էն չը պատասխանեց եւ առանց աջ կամ ձախ դառնալու, ուղղակի տուն դիմեց։ Ափոթած՝ հետեւեցայ իրեն։ Մեր յարկը հասնելու պէս, ձմերուկն ու ընտիր կարմիր խաղողին ողկոյզը դարակի մը մէջ զետեղելով կղպեց. հանեց բանալին վրայէն, գրպանը դրաւ զայն ու զիս թեւերուն մէջ առնելով փախաւ.

—Դէֆի՛ս, մեր հայն էր ան...

—Մեր հա՞յն... Միքէս։

—Այո, Դէֆիս, Բեթրովամը, որ այնքան ազնիւ գտնուեցաւ խեղճ Միքէին։

—Ո՛հ, Միքէ, գոչեցի, իր ողջագուրանքը փոխանակելով. եւ ի՞նչ ըսաւ։

—Ոչի՞նչ...

—Ոչի՞նչ, Միքէս. ոչի՞նչ Սիւլէյմ.. բայց այս սիրելի անունը կարծես կը խեղդէր զիս։ Իսթէրիական փղձկում մը եկաւ վրաս.

—Դէֆիս, խեղճ Դէֆիս, գոչեց Միքէն ահարեկ, ի՞նչ ըրիր ես։

Էն կը փայփայէր զիս ինչպէս մայր աղաւնի մը կը գգուէ իր տատրակին։ Մեղմ շոյանքներով գլուխս եւ երեսս լուաց հոտեղէնով մը, որ գիտէր թէ շատ կը սիրէի։ Վերջապէս արցունքս դադրեցան, բայց ո՛հ, մեռելային ցուրտ պարապութիւնը կրկին տիրեր էր հոգւոյս։

—Հիմա լաւ ես, Դէֆիս, ըսաւ, ետեւս բարձ մը դնելով. յոգնած՝ կռնակիս վրայ պառկեցայ. ուրախութեանս եւ վշտիս առատութիւնը միշտ չափէն աւելի կը թուէին ֆիզիքական կամքիս համար։

Միքէն անձկանօք ինձ նայեցաւ ու ապա դիմեց դէպի դուռը, «շուտով կը վերադառնամ» ըսելով։

Էն իր խօսքին նման ազնիւ էր... Շատ չանցած վերադարձաւ. "Արաբաքան, տէրը, դուրս ելած է, նոյնպէս եւ Գրօգօն. Պարտէզը չեն եւ ոչ ալ ուրիշ տեղ մը կրնամ գտնել զանոնք. ուստի, Դէֆիս, քիչ մը պտուղ ուտենք»։

Բայց նախ եւ առաջ դուռը գնաց, որ, զարմանքով տեսած էի թէ ներս եկած պահուն կղպած էր. այսուամենայնիւ, կրկին գնաց ապահովապէս ամրացուած ըլլալը ստուգելու համար։ Որքան միստիքական էր էն։ ապա, սովորական անխռով հանդարտութեամբ, կէսօրուան ճաշը պատրաստեց, սուրճը եփեց, պրաւգաթաները, չորցած պտուղները եւ մեղրախորիսխը, որոնց այնքան սիրահար էի։

Երազկոտ ապշանքով մը զինքը կը դիտէի. իր հանդարտ անյողդողդ շարժումները քարայրին ներքնի՞կ տեսիլքները արթնցուցին մէջս. որոնք հիմա հեռաւոր անցեալին մէջ թաղուած կերեւէին։ Ամենէն վերջը դարանը բանալով դուրս հանեց գերընտիր կարմիր խաղողի ողկոյզ մը, այնքան մեծ, այնքան գեղեցիկ, այնքան սքանչելի, որ նոյն իսկ Ակոռիին իհետ ալ կը մրցէին։ «Իշխանուհիի ուտելիք է», մրմնջեց էն, այդ աննման պտուղ աղամանդուղի դալար խոշոր տերեւի մը վրայ դնելով։

Ապա դառնալով ինձ, հպարտ ու հաճոյալից արտայայտութիւն մը դէմքին վրայ, որ շատոնց է իվեր չէի տեսած, ըսաւ.—«Տե՛ս, տէրս չէ մոռցած զիս. եկուր, իշխանուհիս եւ կեր»։

(Շարունակելի)

կարգադրել է որ կազմեն այն տների ցուցակը, որոնցից, Բագուի վերջին անկարգութիւնների ժամանակ, զէնդակներ են արձակուել։

———

Կովկասեան փոխարքայի հրամանով Բագուի տեղական իշխանութիւնը հրամայել է զինուորական էկզէկուցիա նշանակել Բագուի, Բալախանի Զաբրատ, Սաբունչի եւ Բամանի գիւղերում, որոնք մասնակցել էին արիւնահեղ թալանների եւ հրդեհների մէջ։

Սակայն Թուրքերի խնդիրքով ընդհ. նահանգապետը բաւականացաւ միայն էկզէկուցիային այն ձեւը տալ որ առանձին զօրախմբեր նշանակուեն մասնաւոր—յատուկ բնակարաններում (եւ ոչ թէ գիւղացոց տներում) եւ սակայն գիւղերն իրանք կերակրեն այդ զօրքերին։ («Բագու»)

———

Ռաշտից գրում են, որ քաղաքում թէեւ թէթեւ բայց տեղի ունեցող հակայայկական պրոպագանդայի պատճառով, եւ ո եւ է ընդհարման առաջն առնելու համար, պարսից կառավարութիւնը թալիշի խանութիւնից 100 ձիաւոր է բերել տուել եւ գիշեր ցերեկ պահակութիւն է նշանակել քաղաքում։

—○—

ԳՕՐԻՍԻՑ մեր թղթակիցը հաղորդում է հետեւեալը.— „Երէկ լուր հասաւ, որ Շահվերդիլար Թուրք գիւղացիք փախցրել են հարեւան Խոտ հայ գիւղի այդիներից 5 տղամարդու իրենց ձիերով։ Իսկոյն դուրս են թափւում գիւղի երիտասարդները և Թուրք գիւղի հանդէպ Բաշարաշուր կոչուած տեղում կռուի են բռնւում Թուրքերի հետ։ Շուտով վերջինները-ս օգնութեան են գալիս նոր Թուրք խմբեր։ Հայ տղաները զիրքեր գրաւելով երկար կրակի տակ խլում են գերի բռնած մարդկանց։ Իսկ ձիերը տարել են և մինչեւ այժմ էլ պահում են։

Այսպէս է վարւում այն Թուրք գիւղը, որ ամբողջովին ապրում է հայերով, իր ամբողջ ապրուստը և ապրելու միջոցները ձեռք է բերում հայ գիւղերից՝ մեծ մասամբ Գօրիսից, որտեղ վաճառում է փայտ, ածուխ, կիր և այլ աւսպիսի նիւթեր։ Այդ մարդիկ դեռ այժմ էլ չեն հասկանում որ եթէ այդ դրութիւնը շատ երկարի, առաջինը իրանք կը լինեն, որ կը տուժեն սովի և կարիքի պատճառով»։

—○—

Գօրիս. 14 սեպտ.

ՊՐԻՆՑ ՆԱՊՕԼԷՕՆԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ Պրինց Լուի Նապոլէօնը մի շաբաթ առաջ այստեղ էր։ Նա այցելեց բոլոր աւերուած գիւղերը և մի քանի կարգադրութիւններ արաւ։ Նախքան գիւղերը մտնելը, Գօրիսում մի յատուկ պատգամաւորութիւն ներկայացաւ և տուեց մի խնդիր, որի գլխաւոր կէտերն էին։

1. Հեռացնել բոլոր Թուրք պաշտօնեաներին, որովհետեւ նրանք են կազմակերպում բոլոր կոտորածներն ու թալանը, ինչպէս օրինակ՝ պրիստաւ Սաղրզ բէկ Մելիք-Ասլանովը Մինքենդում։

2. Թուրքերից յետ ստանալ հայերի թալանուած բոլորը իրերը։

3. Իսկոյն եւ եթ ձերբակալել կոտորածի հեղինակաւոր Թուրք կազմակերպիչներին։ «Ջհաթ» կանչող երկու Թուրք, սէյիդներին պրիստաւին եւայլն։

4. Մինքենդի, Ալիզուլիի եւ Զէյվայի հայերին հաւաքել մի տեղ, իսկ Թուրքերին մի այլ տեղ։

5. Հայ գիւղերին թոյլատրել որոշ Թուով զէնք կրելու։

6. Իրաւունք տալ տեղային միլիցիա կազմել, որով միայն կարելի է դիմադրել Թուրք գազանացած ամբոխին։

Համարեա նոյնանման մի պետիցիա էլ Գօրիսի կանայք ներկայացրին՝ վերականգնելու իրանց եւ իրանց քոյրերի ոտի տակ ընկած պատիւը։

Նորին Բարձրութիւնը ուրախութեամբ ընդունեց պետիցիաները. պատասխանեց, որ կը միջնորդի գիւղերի տեղափոխութեան մասին, կը հրամայէ յետ տալու բոլոր թալանն ու կողոպուտը եւայլն։

Մինքենդ գնալով իր աչքում տեսնում է կատարուած տնօրէնութիւնները, մտնում է պղծուած եւ կողոպտուած եկեղեցին, խստիւ պատուիրում է նոր նշանակուած պրիստաւ Բահրամ-բէկին ամենակտրուկ միջոցներ ձեռք առնել թալանն ու աւարը վերադարձնելու համար։

Միջանկեալ պիտի ասեմ, որ իսկապէս շատ բան ենք պարտական յիշեալ պրիստաւին, որովհետեւ նրա ձեռք առած կտրուկ միջոցներով, նախքան պրինցի գալը, արդէն շատ բան վերադարձրուեց. մօտ 30 Թուրքերի էլ կալանաւորեց։ Վերջիններս այժմ գտնւում են Գօրիսի բանտում, բայց սրանց մէջ չեն պրիստաւ Սաղրզ-բէկը, Շամիր-բէկը՝ պրիստաւի գրագիրը. սէյիդները. մոլլան եւ այլ ազդեցիկ-խառվարներ։

Պրինցը սպառնացել է դրանցից մի քանիսին կախաղան բարձրացնել։ Գօրիս վերադառնալուց մի օր յետոյ գաւառապետի եւ հայ վարդապետի հետ անցաւ Ղափան, որտեղից Օրդուբադի վրայով կանցնի Երեւան։

———

Բագուի ժամանակաւոր ընդհ. նահանգապետը հետեւեալ հեռագիրն է ուղղել պարսկաց սահմանի ռուսական գործակալ կախանովսկուն. „Խնդրեմ հաղորդել մեր դեսպանին Թէհրանում, որ յայտարարեն Պարսկաստանում թէ Բագուում հայերի և Թուրքերի մէջ խաղաղութիւն է“։

—○—

ՇՈՒՇՈՒՑ մեր թղթակիցը սեպտեմբեր 26-ից մեզ գրում է.

Արդէն վեց օր է, որ Ղարաղշլաղ հայաբնակ գիւղի մօտ հայերի և Թուրքերի մէջ ընդհարում է բռնկուել։ Շրջակայ Թուրք գիւղացիները ահագին խմբեր կազմած յարձակւում են Ղարաղշլաղ գիւղի վրայ, բայց գիւղացի քաջարի հայ երիտասարդները ամենալաւ դիրքերում ամրանալով սկսում են պաշտպանուել։ Ինչպէս լսում ենք, կռիւը շատ զօրեղ է եղել. թէեւ Թուրքերին բաւականին օգնողներ են հասել, բայց բոլորովին ուժասպառ են եղել և շատ զոհեր տուել։ Գաւառապետ Աւալեանին, ինչպէս լսում ենք, շտապել է կոտորածի վայրը խաղաղացնելու։ Ցեսնենք ինչ հետեւանք կունենայ նրա գալուստը։ Այստեղից ևս ճանապարհուեց մի հարիւրեակ կազակ։ Ղարաղշլաղում պատահածների մանրամասն թղթակցութիւնները թողնում ենք ականատեսներին։

Ելախից եկողները պատմում են, որ իրանք ճանապարհներին, մանաւանդ Ազդամում, ենթարկւում են Թուրքերի կողմից հայհոյանքների և ամենալպիրշ յիշոցների։

—○—

Սեպտ. 26-ին Գանձակ են եկել Ղազախի գաւառից մի քանի տասնեակ պատգամաւորներ Թուրք և հայ գիւղերի կողմից և գանգատ են տուել գեն. Ցակայշվիլիին՝ նոյն գաւառի կալուածատէր՝ Կուշչի գիւղացի Մամեդաղա Իսկանտարբէկովի վրայ և յայտնել, որ այդ կալուածատէրը իր ծառաներից մի քանիսին զինելով՝ ուղարկում է շրջակայ գիւղերը և յանձնարարում գրգռելու և ստիպելու Թուրք ազգաբնակութեանը, որ զինուեն և հայերին կոտորեն, որովհետեւ այժմ ամենայարմար ժամանակն է։ Բացի դրանից, այդ Թուրք բէկը լուր է ուղարկում հայ գիւղերի իրան յայտնի հայերին և փրկանք պահանջում հարիւր ռուբլիներով ու սպառնում կոտորել ամբողջ ընտանիքը, եթէ չը տան։

Իսկանտարբէկովի մասին յայտնելով այդ բոլորը, գանգատաւորները խնդրեցին հարկ եղած միջոցները ձեռք առնել նրա դէմ, և, աւելացրին, որ եթէ այդ չկատարուի, չեն երաշխաւորում գաւառի հանգստութեան մասին, որովհետեւ խաւար ամբոխը կարող է շարժուել գրգռիչի ստիպմամբ։

Գեն. Ցակայշվիլին հրամայեց անյապաղ կարգադրել նահանգի շրջաններից դուրս աքսորել Իսկանդարբէկովին, որպէս մի անձ, որ, ըստ գանգատաւորների պնդումին, եղել է միշտ անբարոյական և անհանգիստ մարդ։

«ԱՐՇԱԼՈՅՍ»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պուլկար էքզարքը հոկտեմբեր 5-ին Պոլիս հասեր է. պուլկար գաղութը և Նաչեուէչ կինքը դիմաւորեր են կայարանի մէջ։ Հայոց պատրիարքի Գարուքէհան նոյնպէս եկած էր էքզարքին գալուստը շնորհաւորելու։

— Հակառակ Գերմանիոյ պաշտօնական հակառակութեան կառավարութիւնը Պալատի և Ստամբուլ թաղերու միջեւ շինուելիք կամուրջին շինութիւնը իրատէով մը յանձնած է Քրէօզոի։

ՌՈՒՍԻԱ

Հոկտեմբեր չորսին Բեթերսպուրկէն կը հեռագրեն որ այդ երեկոյ ոչ մէկ թերթ լոյս տեսած չէ։

— Հոկտեմբեր 3-ին իշխան Թրուբեցկոյի թաղման հանդէսը կատարուելէն վերջը մօտ 2000 հոգի կարմիր դրօշակներով և յեղափոխական երգեր երգելով սկսան զանազան իրեր նետել ոստիկաններու վրայ։ Այդ ամբոխը քիչ մը վերջը ընդհարում կունենայ ոստիկանների հետ համալսարանին մօտերը, որու միջոցին բաւական ոստիկաններ կը վիրաւորուին։

— Բեթերսպուրգի գրաշարները գործադուլը վերջացած է գրաշարներուն որոշման հիման վրայ։

— Սկաթերինօսլավի մեքենաներու գործարանին տնօրէնը իր տանը մէջ ռումբով սպաննուած է. սպանողը անյայտացած է։

ՖՐԱՆՍԱ

Պուլկարիոյ իշխանը համակրանքով լի ընդունելութիւն գտեր է Փարիզի մէջ։ Թերթերը համակրական յօդուածներ կը նուիրեն երիտասարդ Պուլկարիոյ և անոր իշխանին։

ՇՈՒԷՑ—ՆՈՐՎԷԳԻԱ

Սթօքհոլմէն հոկտեմբեր 4-ին կը հեռագրեն որ ազգային ժողովը Նորվէկիոյ Շուէտիայէն բաժանումը որոշած է վերջնապէս։

ԱՆԳԼԻԱ

Բարիզի Քաղաքային Խորհուրդին անդամներէն 60 հոգի Լօնտօն հասնելով ընդունուեր են Լօնտօնի իրենց պաշտօնակիցներէն։ Լօնտօնի քաղաքային խորհուրդը շքեղ հանդէսներ կը պատրաստէ ի պատիւ հիւրերու։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ՖԻԼԻՊԷ— Վ.

Բաժնեգինը ընդունեցինք. Ձեր ակնարկած թռուցիկը «Վարդօն Վարդոյի դէմ» այստեղ չինուած է երկու խաչագողներու ոչխարային հնարամտութեամբ։ Մենք այդտեսակ շարլատանական գործերուն կարեւորութիւն չենք տար և մանաւանդ շատ գոհ կըլլանք, որովհետեւ այդ տեսակ փաստերը կը ցուցնեն Վարդոյի հարուածեալներու կեղծարարական և շարլատանական ամբողջ հոգին։

Печатница на П. Глушковъ и С-ие, Варна